

Հիտ նաև խնդիր մատուցեր են թէ առժամանակեայ աղօթարան եղած Համադրեալ ընթերցարանը խիստ նեղ ըլլալով, ժողովրդեան մեծ մասը ժամերգութեան ներկայ գտնուելէ դուրս կը մնան, ուստի Ոսկերեւանի եկեղեցին, որ ժողովրդեան ստուգովը շինուած է, աղղին աւանդապահ մասին յանձնուի, որպէս զի հանդարտ խղճով հոգեոր պաշտամանց ներկայ գտնուին:

Աւերդիշեալ տիկնայք են.

Տիկին Տիրան պէյ.

" Կէօէեան.

" Խուրտաճեան.

" Սամուէլեան.

Հնչ

Բարձր. Մեծեպարքոս Ալի փաշային հրամանաւ Բերայի Ս. Օհան Ոսկերեւան եկեղեցին ազատ կաթօլիկ Հայոց տրուել է բոլորովին, և երէկ մեծահանգէս ձայնաւոր Պատարագ մատուցուեց ահոն, ներկայ եղող ժողովրդեան թիւը 5-6.000/ կը հասնէր, այսչափ մեծ բազմութիւն մ'եկեղեցւոյն մէջ չը կրնայով տղմիլ, շատեր փողոցին մէջ մնացին:

Ս. Պատարագի առնն Հասունեանի անունը չը յիշատակուեցաւ:

Բոլոր ժամանացութիւններն ու արարողութիւններն Հայ Լուսաւորչական եկեղեցւոյ ճիշտ նմանութեամբ կատարուել են:

Երևան Թիւ 90

ԿԱԹՈՒԿԱԶԳԱՅԻՆՔ

Հռոմէական ազգայնոց մէջ տեսնուած աւանդապահական շարժումը բազում նկատմամբ ուշադրութեան արժանի է: Ազգային զգացումն երկար ժամանակ զսպուելէ և զրէթէ մարելէ ետեւ, նոր ջորութեամբ կը փայլատակէ և անդրալեռնական կղերին այնչափ տարիներէ 'ի վեր հիմնած շէնքը կործանելով կը տապալէ: Հռոմ իրար անցած է բայց իր յետադիմական ջանից և անաթմայից հակառակ, յառաջդիմութեան անյեղ յօրէնքը պէտք է որ իր գործը տեսնէ: Այնչափ ժամանակներէ 'ի վեր կաթօլիկ ազգայնոց վրայ տիրած թմրութիւնն և կղերին ազդեցութեան գերիշխանութիւնը չ'կրօցաւ բոլորովին անոնց երակին մէջ հոսած հայկա-

կան արեան ջերմութիւնը շիջուցանել, և ահա լատինականութեան դէմ բողոքելով միաբերան կը գոչեն: Մեր ալ Հայկայ որդիներն ենք:

Անհնար է որ ամեն հայ այս յայտարարութեան սրտաշին ծափահարութիւններ չընէ: Քանի որ վէճը Գեր. Հասունի անձին դէմ ամուլ գանգատներու վրայ միայն կը կայանար, շարժումն ըստ մեզ այնչափ կարեւորութիւն չ'ունէր, ինչպէս որ ասկէ յառաջ ալ մեր կարծիքը յայտնած էինք: Բայց գործն այն անձուկ շրջանէն անցաւ. Հռոմայ արքանեակներուն բռնաւորական ընթացքը ժողովրդեան ամենէն պարզամիտներուն անգամ աչքը բացաւ և ամենէն չափաւորեալներուն համբերութիւնն սպառեց: Զգուելի տեսարան. առաջին անգամ տեսնուեցաւ Քրիստոսի կրօնին մէկ պաշտօնեայն, խաղաղութեան և սիրոյ աշակերտ մը, որոյ պարտքն է ներել և ոչ պատժել, չորս հարիւր պլազգի զինուորաց օգնութեամբ եկեղեցի երթալ և պատարագ մատուցանել 'ի յիշատակ նորա՝ որ իւր չարչարանաց զիշերն ըսաւ թէ իւր երկնաւոր հօրն աղաչելով կրնայ հրեշտակաց բանակ մը օգնական իջեցնել, բայց և այնպէս ինքզինքն անղէն մատնեց կատաղի ամբոխի մը ձեռքը: Իսկ հոս անոր աշակերտեալ անձը մը՝ երկրաւոր ջորութիւնն իրեն 'ի թիկունս օգնութեան կոչելով կը ներկայանայ անղէն ժողովրդեան մը, որ միայն իր նուիրական իրաւանց բռնաբարութենէն կը գանդատի, և առանց բուռն միջոցներու՝ իր բռնաբարիչ համարած անձին անուան յիշատականութիւնը Ս. խորանին վրայէն լսել չուզեր:

Այս բաղդատութիւնը Միստիքական զգացմամբ չէ որ կ'ընենք, այլ պարզապէս սրբապղծութեան մեծութիւնն ու կարեւորութիւնը ցուցնելու համար: Տարակցոյ չ'կայ որ ոստիկանութիւնը յանցանք չ'ունի անցնել երկուշարթի Ս. Յ. Ոսկերեւանի եկեղեցւոյն մէջ իւր ներկայութիւնը ցուցնելով, քանզի հրաւիրանօք գացած էր. ուստի բոլոր պատասխանատուութիւնն անոնց վրայ կ'իյնայ, որք այս անտեղի և անպատեհ հրաւերն ըրած և ոստիկանութեան պաշտօնէին կողմէն ալ եկեղեցւոյ դուռն յայտարարութիւն մը փակցուցած էին, որով հրաման կը տրուէր արանց և կանանց պատարագի ժամանակ բարձր ձայնով աղօթք չ'ընել, և կը ծանուցուէր թէ "Ով որ բարձր ձայնի աղօթելով

պատարացն ընդմիջէ, ըստ օրինաց պիտի պատ-
ժուի։"

Հայ Աթոռիկ ժողովուրդն այս ըսպառնայեաց
առջև իմաստուն խոհեմութեամբ վարուեցաւ, այս-
ինքն Գեր. Հասունի անուան յիշուած ժամանակ
եկեղեցին ձգեց դուրս ելաւ։ Ուրիշ տեսակ ընթացք
մը կրնար ծանր հետեւանք ունենալ և ոչ միայն
նոյն միջոցին զինուորաց ուղղակի միջամտութիւնը
հրաւիրել, այլ և մատնիչներուն պատահութիւն
մատակարարել որ զժողովուրդն իրեն ապստամբ
մատնեն կառավարութեան առջև։ Արդէն ամբաս-
տանութիւնները պակաս չեն, և ասոնց պատաս-
խանելու համար է որ վսեմաշուք Տիրան պէյը
Լէվընթ—Հէրըլտի նամակ մը ուղղած է՝ իրողու-
թիւնը ճշմարտութեան լուսով նկարագրելու հա-
մար։ Ոստիկանութիւնը ժողովուրդեան բարձր ձայ-
նիւ աղօթքը կ'արգելու։ Բայց անոր թելադրիչները
մոռցած են բոլորովին թէ ըստ Հայաստանեայց ե-
կեղեցւոյ Հին սովորութեան՝ ժողովուրդն ալ իրա-
ւունք ունի դպրաց հետ երգելու, որք դասին վրայ
իրեն ներկայացուցիչն են։ Ուստի ժողովուրդեան
բարձրաձայն աղօթքը ոչ միայն յանցանք չ'է, այլ
իւր պարտքն է։ Գեր. Հասունի անուան յիշատա-
կութիւնը խախտուելուն վրայ ոստիկանութեան
պաշտօնէին յայտարարութիւնը լուծեամբ անցած
ըլլալով, Տիրան պէյ այս կէտիս վրայ դիտողու-
թիւն ընել աւելորդ կը համարի, բայց միւս կէտե-
րուն վրայ իւր տուած բացատրութիւնները ըստ ա-
մենայնի օրինաւոր և եզրակացուցիչ են։

Ոստիկանութեան այս տարօրինակ միջամտու-
թիւնը զուտ կրօնական խնդրոյ մը մէջ, ինչպէս
մայրաքաղաքիս օտարազգի լրագիրներն ալ դիտո-
ղութիւն կ'ընեն Քրիստոնեայ ազգաց վրայ նպաս-
տաւոր տալաւորութիւն չ'ըրաւ։ Այս դէպքը եր-
կուշարթիէն ի վեր Աթոռիկ չեղող հասարակու-
թեանց բերանն է։ Յոյներն ու Հայերն ալ շարու-
նակ ասոր վրայ կը խօսին, և թէպէտ այս միջա-
մտութեան օր մ'իրենց ալ հասնելու վախը Լէվըն-
թի կարծածին չափ մեծ չ'է, բայց անտարակոյս
միջամտութիւնն ըստ ինքեան չ'էր կրնար միտքերը
չ'ուղղել։ Իսկ Աթոռիկ աղղայնոց գաղով. Լէ-
վընթ—Հէրըլտի ուղղեալ ուրիշ նամակ մ'այսպէս
կը նկարագրէ անոնց զգացած տալաւորութիւնը.
"Իւրաքանչիւր որ ինքնիրեն կը հարցանէ թէ ար-

դեք ասիկա Քրիստոնեական կրօնի պաշտօնեայ մ'է
որ չորս հարիւր զինուորաց պահպանութեան ներ-
քեւ պատարագ մատուցանելու կուգայ, և թէ
արդեօք այսուհետեւ ոստիկանութեան պաշտօնեայն
պիտի ճանչնանք մեղի կրօնական գողիս, նոյննա-
մակին խօսքին նայելով, եկեղեցւոյ մէջ մանող
գաղտնի ոստիկանութեան գործակալներն ալ Ռէ-
վոլվըր ատրճանակներով զինեալ էին, թէ և մեք
ալ Լէվընթ Հէրըլտի հետ ասոր հաւատալ չենք
ուզեր։

Ծանօթ դէպքերը կրկնել չ'ենք ուզեր, բայց
եղածներէն կը տեսնուի որ Հռովմէական Հայ Ժո-
ղովրդեան ներկայ պարագայից մէջ անկարելի պի-
տի ըլլայ իւր ստակով կառուցեալ տաճարներուն
մէջ հանդարտ խղճիւ և անվրդով իւր աղօթքն
ընել։ Ուստի առանձին տաճարներ ունենալու հա-
մար տէրութեան ըրած ազգայնաց արդիւնքին սպա-
սելով՝ Համազգեաց ընկերութեան ժողովատեղին
առժամանակեայ եկեղեցւոյ փոխարկած է, և հոն
ուր Գեր. Հասուն ազգային զգացումն ընդ միշտ
խղզած կը կարծէր, հոն անոր կենդանութիւնը
յաղթական կերպիւ կը նուիրացործի։

Ի՞նչ պիտի ընէ Հիմայ Հռովմ. պիտի անսայ այս
զանգատանաց ձայներուն և պիտի թողու որ Հռով-
մէական հայ ժողովուրդը իւր վաղեմի իրաւունքնե-
րը պահպանելով՝ իր աչքին առջև հերձուածող
համարուած ազգի մը ծեսերը արարողութիւնները
և ազգայնութիւնը պահպանէ։

Մէք չ'ենք կարծեր թէ Հռովմ իւր ընթացից
դէէն խոտորի. ուստի թէ և կիրքերը ցածուցանե-
լու համար առերեսով դիմում մ'ալ ընէ, յետոյ
առաւել ևս փութով իւր դործը յառաջ պիտի
տանի։ Մինչև հիմայ զարմանք կուգար մեզ որ
Հռովմէական ազգայինք, որոց մէջ հայ անուան
պարծանք եղող այնչափ բարեկիրթ անձինք կը դրու-
նուին, և որոց մէջ Միսթարեան միաբանութիւ-
նը, որչափ ալ որ վերջերս իւր հակազգային ըն-
թացիք իւր առաջուան համարումը կորուսած էր,
բայց տակաւին ազգային լիզուին պատմութեան և
զրականութեան մատուցած սպաժառ ծառայու-
թիւններն անժխտելի էին, անդրալեռնեայ կուսակ-
ցութեան ձեռքը հլու գործիք մ'ըլլան, Բայց ա-
հա ժամն եկաւ որ իրենց ազգութիւնն աշխարհի
առջև պաշտպանելով՝ անդրալեռնական լուծը լու-

լրտվին թօթափեն և Հոռվմայ թմրեցուցիչ աղ-
ղեցութենէն աղատելով իրենց նախնեաց փրկարար
առանգութիւնները պահպանեն : Այս ընթացքիս
մէջ, թէպէտ և ազգին մեծագոյն մասին հետ կրօն-
քով չ'միանան, բայց անոնց եղբայրական համա-
կրութիւնը հաւատեալ ևր վայելեն, և ազգին եր-
կու ճիւղերը, իրրե մի և նոյն արմատի շառաւիղ-
ներ՝ իրարու գիրկընդխառն վաթթութեամբ, ևր դար-
գանան և ևր յառաջդիմեն փոխադարձ սիրով ու
կրօնական ներողութեամբ, ի պարծանս Հոռվմայ
և Հոռվմայ անուան :

Մատիւ Թիւ 943

Նախընթաց թուով յարգի Վաթիկի ազգայնոյ
մը մեզ տուած տեղեկութենէն առնելով հրատա-
րակիւ էինք թէ ազգային իրաւունքներն Հոռվմայ
աթոռին յանձնելու վերաբերեալ գիրը մի միայն
Գեր. Հիւրմիւղեան եղբարք չեն ուզած ստորա-
դրել : Եւրքէն ստացած տեղեկութիւններ ևր հա-
ւատեն թէ Գեր. Սուքիաս Գաղանձեան նպիտո-
ղոսն և ուրիշ մէկ երկուք ալ ի սկզբան չեն յան-
ձնեալ առեր ստորագրել : Բայց վերջն ինչպէս եղեր է՝
գետ լուր մը չկայ : Քաղղէացւոց Պատրիարքին
գլխուն եկածը քաջաբերական յոյս մը չտար գոր-
ծին վախճանին վրայ :

Նոյն

Պըլսներ թէ երկուշարթի օրն համազգեաց ըն-
կերութեան ժողովատեղեւոյն մէջ ներկայ գտնուող
բազմութեան ըրած կամաւոր նուէրին զումարը
մինչև 10,000 դրշ, եղեր է :

Նոյն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՅ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(ՇԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՆ ԵՆՆԻՆ)

Մենք կարող ենք էլի շատ օրինակներ բերել ա-
պացուցանելու համար, թէ բոլոր արտաքին զգա-
յարանաց գործունէութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ
հասարակ սովորութիւններ և ունակութիւններ :
Զորօրինակ՝ հոռաւորութիւնը, մարդու հոռաւորութիւնը
իւրեւ ընդունակ է նմարկուել զանազան մար-

միներու ներգործութեան, որոնք կարող են ան-
ընդհատ արտաշնչել և տարածել շատ նուրբ մաս-
նիկներ, բաժանելով նոցա իւրեանց զանգուածից,
եւր որ այս նուրբ նուրբ մասերը ներգործում են
մեր հոռաւորութիւնի վերայ, մենք ստանում ենք մի ա-
խորժ կամ անախորժ զգացմունք, որի թելադրու-
թեամբ և իմանում ենք, որ սա մի պատճառ պէտք
էր որ ունենար, բայց այս թելադրութիւնը չէ ցոյց
տալիս բնաւ, թէ նիւթական մի պատճառ հար-
կաւ պէտք է լինէր :

Հապա որ տեղից է որ հոռաւորութեան զգացու-
թիւնը ինքն իրան մէկ առանձին բան չ'ենք կար-
ծում, այլ այս զգացութիւնը միշտ մի որ և իցէ
արտաքին մարմնուն ենք վերաբերում, սորա պա-
տասխանը այն է, որ եթէ ի ծնէ զուրկ լինէինք
տեսութեան և շօշափման զգայարաններից, ապա
այս վերաբերութիւնը չ'էինք կարող անել ամենևին :
Մեր սոցա օգնականութեամբ արած դիտողութիւն-
ները, փորձառութիւնները և դատողութիւններն
են, որ երեխայական հասակից արդէն սովորցրել
են մեզ այս վերաբերութիւնը անել միշտ այսպիսի
գիտութեանը : Եւր որ վարդ տեսանք, մօտը
գնացինք, շօշափեցինք, հոռաւորութիւն ասուած
զգացմունքն էլ ստացանք միշտ : Քանի անգամ որ
շուշանին մօտեցանք, կամ պոկեցինք՝ մեր ձեռքը
տուին, նորա անուշ հոտն էլ այնքան անգամ զգա-
ցինք և իմացանք : Ահա այսպիսի փորձառութիւն-
ներով և դիտողութիւններով սովորում է երեխան,
թէ հոռաւոր մարմիններուն մօտնալուով, հոռա-
ւորութեան զգացմունք է ստանում նա միշտ, որով
և ունակութիւն է ստանում նա հոռաւորութեան
զգացմունքը մի որ և իցէ մարմնոյն վերադրել, ինչ-
պէս որ շօշափողական զգացմունքը նոյն իսկ շօ-
շափելի առարկային :

Այս օրինակներից արդէն ինքն իրան երեւում է
թէ ինչպիսի կարեւոր և բազմակողմանի հոգեկան
և մտաւորական գործունէութեան մէջն է լինում
երեխան դեռ ևս այն հասակում, յորում նա թվում
է մեզ, հասակն առանձնեմ, դեռ ևս շատ հե-
ռու մարդ անուն կրելուց :

Գիտութիւնը, քննելով և իմաստասիրելով երե-
խայի հոգեկան, մտաւորական և ֆիզիքական ա-
ռաջին գործողութիւնները, ոչ թէ միայն բաւական
նայնում է մեր հետաքրքրութիւնը, այլ և մի և